

եալք և ուսանողք կրնան համարուիլ : Այս վերոյ գրեալ սրբամաններէն դուքս ըստ վճուոյ Սուրբ Գրոց և ըստ հաւատոյ ողջամիտ վարդապետաց՝ ոչ ճշմարիտ Քրիստոսնեայ կոչ և ոչ Աստուծոյ որդի :

Ապա ուրեմն ամեն Քրիստոսնեայ իւր կոչուած օրէն պէտք է աշխատի իւր երկնաւոր Հօր արժանի որդի լինելու, հաւատովք, հնազանդութեամբ և սրբութեամբ, « Որպէս զի տեսնեն մարդիկ նոցա բարի գործքերը և փառաւորեն նոցա երկնաւոր Հայրը » :



Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Մահն անհրաժեշտ է մահկանացուաց համար, այն որ կը ծնի, պէտք է մեռնի : Բայց մահուամբ մեզմէ բաժնուողը բնական ցաւ մի կ'առթէ մեր սրտին . այս ցաւն այնքան սաստիկ, այնքան դժուարակիր կը լինի՝ որքան հանգուցեալք արժանիք կ'ունենայ և ընտիր բարեմասնութեամբք զարդարուած կը լինի :

Ամայս վերջերը դուժեցին լուսալիրք վեմանաւք Պալեան Յակոբ պէյի կողակից նազերուհի Բեմպէ տիկնոջ տարաժամ մահը՝ ի ցաւ սրտի Պալեան և Պարտիզպանեան գերդաստանաց : Այսպիսի վշտառիթ զրկանաց համար զգայուն սրտերն չեն կարող չը ցաւիլ . քանզի հանգուցեցնին դովելի ցիրքերէն եւ անզուգական բարեմասնութիւններէն

զրկուած կը լինի թէ ազգը և թէ նորին պայծառախոյզ գերդաստանը, զարկանք մի, որ նկատմամբ ենթակային անդարմանելի է :

Սակայն քրիստոսնեան կրօնը որ ամեն այսպիսի պարագաներու մէջ հաւատացելոց վերայ իւր՝ հօր ազդեցութիւնը կ'ընէ, անշուշտ պէտք է դարմանէ Քրիստոսնեայ սգաւորին սրտին վիշաք, որ յիշելով հանգուցելոյն առաքինութիւնները և գովելի վարուցանքձութիւնը, ապահով կը լինի իւր սիրելւոյն յաւիտենական հանգստեան վերայ և այնպէս միսիթարութիւն կը զգայ իւր հոգւոյն մէջ, զոր չէ կարող տալ աշխարհը :

Ջերմեռանդն սրտով կը մաղթեմք և մեք որ Սուրբ Հոգին Աստուած հասնի յօգնութիւն և միսիթարէ թէ հանգուցելոյն ամուսին վեմ : Յակոբ պէյն և թէ հայրը՝ Աւետիս աղա Պարտիզպանեան իրենց դառն տրամութենէն և հանգուցելոյն շնորհէ յաւիտենական հանգիստ յերկնից արքայութեանն՝ իխորանս սրբոց :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ք

Մէկ քանի ամիս առաջ Իշխիա անուն Ռէմիլեյի հարուստ Յոյն վաճառական մը Տաճիկ գիւղացիէ մը առնելէն ուղած ժամանակ՝ պարտադանը պարտքը չը վճարելէ ի գառ, տեղոյս Կառավարութեան կը դիմէ ըսելով թէ՛ յիշող Յոյն վաճառականը կրօնքիս հայհոյեց . իսկոյն Կառավարութեան հրամանաւ հոս բերուեցաւ : Դատախազն Տաճիկ վկայներով կը հատուտեթ, իսկ վաճառականը բողբողին կը մերժէր. Կառավարիչը զննքն հոս բանտարկելով կուզէր գտնել վերջացնել . բայց ամայս մէկին Պօլսէն եկած հեռագիր մը կը հրամայէր ի Տիգրանակերտ երէք տարի արսոր երթալ ուստի երկու օրէն յետոյ մեկնեցաւ :

— Ամայս մէկին Պօլսէն եկած հե-

### ՅՈՒՑԱԿ ԳՐՈՑ

(Շարունակութիւն և վերջ տես թիւ 9.)

2. ր. 4. ր.

նագիր մը՝ տեղոյս Կառավարչին Պօլիս երթով կը հրամայէր, նորին վեճմու թիւր տեղոյս Գատաւորք փոխանորդ կար գելլով, ամսոյս 3 ին Յուլայէ՝ և 4 ին Աւրատրիական շոգենաւով դէպ ՚ի Պօլիս մեկնեցաւ Պերուժի ճանապարհաւ։ 6 ին Պերուժ հասնելով, կրկին հեռագիր մը կ'ընդունի, որով ետ դառնալ կը հրամայուէր. ուստի վսեմ, Կառավարիչը իր պաշտօնատեղին դարձաւ ցամաքային ճանապարհորդութեամբ։ Սոյն միջոցին Ագրի (Ա.բ.բեա) հանդիպելով հանգուցեալ Ապտալլահ Փաշայի գտտեր հետ 16 ին քաղաքս հասաւ, և 22 ին գիշերը նոյն օրիորդին հետ ամուսնացաւ։

— Ամսոյս 18 ին այս տեղէն մեկնեցաւ Գաղղիոյ Հիւսպտոս պարոն էր. նէսթ Գրամբօնը վեց ամիս յԵւրոպա ճանապարհորդելու նպատակաւ. իրեն փոխանորդ կարգուեցաւ Պ. Մաթրի մոնի, որն որ յատուկ այս գործոյն հաւամար հոս եկած էր։

— Բաւական ժամանակէ ՚ի վեր արդէն կը լսուէր թէ Ուռհայի ջուրերն հետզհետէ սկսեր են նուազիլ. այժմ կ'իմանամք թէ նոյն քաղաքի մօտ գլու նուած երկու մեծ աղբիւրներն (որոց մին Տիրէիէ կ'անուանի և միւսն Սիւլէյ ման խոնարը) բարբոսին ցամաքեր են, որով նոյն աղբերց առջեւ գտնուած պարտէզներն ամայացեր են խարստ։ Նոյնպէս ալ քաղաքին մէջէն բոխեալ երկու մեծամեծ և ձկալի աղբիւրներն, որոց մին կ'անուանի Հայր Սիբրակաօի աղբիւր և միւսն Հոնդլիս, բաւական նըւաղեր են եղեր. նոյնպէս ալ քաղաքէն մէկ ժամու հեռաւորութեամբ Կարմոնիճ անունով Հայու գիւղի մը մէջ գտնուած երկու աղբիւրներն խիստ նուաղած լինելով տեղւոյն ժողովուրդը կը նեղուին։ Սոյն ջուրց նուազելուն պատճառ կը արուի երկար առենէ ՚ի վեր ձեան պահասութիւնը. քանզի առաջ ամեն տարի շատ ձիւն կուգայ եղեր Ուրհայի շրջակայները։

ՄԱՏԹԵՈՍ ՌԻՒՀԱՅԵՑԻ, գործ նախնեաց յԲ գարու. Տպ. 1869. Ժամանակագրական Պատմութիւն, որ կ'ըսկսի 951 թուականէն և կը հասնի մինչեւ 1162 թուականը կը պատմէ 210 տարուան մէջ տեղի ունեցած անցքեր, իրմէ յառաջ եղած յիշատակարաններն բողբոջ և մանուսք իւր ժամանակ պատահած անցքերը, Հայրենասիրական զգացման զեղուն և սրտաշարժ կերպիւ կը խօսի Հայրենեաց կրօն տառապանաց և նահատակութեանց վրայ . . . . . 14

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՓԵՍՍՅՈՒՑԻՑ, յորին Պետրոս Ա. Եպիսկոպոսէ Աղամեան Բերդուսեանց) Տպ. 1850. Պօղոս Ս. Առաքելոյն առ Եփեսացիս գրած թղթոց մեկնութիւնն և պարզ և լուսաւոր ոճով . . . . . 25

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ, Ներսիսի Լամբրոնացոյ, Տպ. 1855. Ս. Յովհաննէս Աւետարանչի Յայնուութեան գրքին մեկնութիւնն է, զոր յոյն բնագրէ թարգմանած է Ս. Ներսէս Լամբրոնացին . . . . . 10

ՄԻՆԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ, գործ յԲ գար, Տպ. 1871. ուր բայ ՚ի ժամանակագրական պատմութեան բովանդակած է նաև զամառան ամսոց գաւազանագրերը, նոյնպէս և Հայոց կամոյզկոսաց շարունակութիւնը մինչեւ ց'երեսն Շընորհալի . . . . . 16

— Նոյնը՝ ուրիշ գրադարով բաղդատուած փոքր ինչ տարբերութեամբ առաջինէն, Տպ. 1870 . . . . . 12

### Յ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ, գործ նախնեաց Թ. Գարու, Բ. Տպ. 1869. Սոյն հատրմախր պատմութիւնը աշխարհի ստեղծումէն կ'ըսկսի, և համառօտելով մինչև իւր ժամանակը կը հասնի, իսկ իրեն ժամանակակից դէպքերը կը պատմէ մանրամասն և խիստ օրտառու կերպիւ բարգաւաճ ոճով և լի եռանդեամբ, որ այս երկրորդ անգամ ձեռագրաց հետ նորէն բաղդատուած և գրուինքու բաժնուած է . . . . . 10

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ, վկայասանութիւն մարուր գրաբար լեզուաւ. հեղինակութիւն Ս. Աթոռոյս բաղմարդիւն միտքան Տէր Իսահակ Ծ. Վ. Տ. Գրիգորեան գաղատացի, Տպ. 1849. սոյն գիրքը 60 գիշերի բաժնուած է, յորս Յովսէփ իւր Ասանթթ ամուսնոյն հետ խօսելով կը հրահանգէ զայն յատուած պաշ